

ԿԱՐԾԻՔ

ՎԱՐԴԻԹԵՐ ԻՎԱՆԻ ՀԱԿՈՒՅԱՆԻ “21-ԴԴ ԴԱՐԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ” ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գրախոսման ներկայացված սույն ատենախոսությունը նվիրված է գործաբանության երկու առանցքային կատեգորիաների, մասնավորապես՝ քաղաքավարության և ենթատեքստի յուրահատուկ տեսակի՝ այն է՝ իմպլիկատորայի, փոխադարձ խաչման ուսումնասիրությանը: Քաղաքավարությունը՝ որպես զուտ սոցիալական երևույթ, ուսումնասիրվել է տարբեր մշակույթներում, քանզի այն սոցիալիզացիայի անքակտելի մասն է կազմում: Ավելին՝ քաղաքավարությունը մեկ մշակույթից մյուսը անցնելիս կարող է զգալիորեն տարբերվել և ավելին՝ փոխակերպվել՝ դրանով իսկ ձեռք բերելով միջմշակութային նշանակություն: Իրավ, քաղաքավարությունը ցանկացած հանրության առօրեական փորձի և հավաքական գիտակցության, ինչպես նաև առօրյա լեզվի անբաժան մասն է կազմում և արտացոլում է յուրաքանչյուր լեզվի ազգամշակութային իրությունները, որոնք հետաքրքրություն են ներկայացնում անգլերեն սովորող ուսանողների համար: Կարծում ենք, որ ներկայումս նմանատիպ աշխատանքների պահանջարկը մեծ է, և այս տեսանկյունից ատենախոսի ուսումնասիրության թեմայի ընտրությունն արդիականությունը արդացված է:

Սույն ատենախոսության շրջանակներում ատենախոսը քաղաքավարության կատեգորիայի ուսումնասիրությունը կատարում է իմպլիկատորայի հետ հատման լույսի ներքո: Քաղաքավարության իմպլիկատորայի լեզվագործաբանական դրսևորումները ուսումնասիրվում են հատուկ ժանրում՝ մասնավորապես պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներում: Քաղաքավարության կարգը քննվում է համադրական մակարդակով, դրանով իսկ փորձ է արվում վեր հանել քաղաքավարության ինքնատիպ առանձնահատկությունները: Վերջին հանգամանքը ապահովում է աշխատանքի նորույթը:

Կառուցվածքային առումով, աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից: Աշխատանքի վերջում հավելվածի տեսքով ներկայացված են պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցները:

Առաջին գլուխը՝ “Լրագրային հարցազրույցների առանձնահատկությունները”, նվիրված է հարցազրույցի՝ որպես առանձնահատուկ լրատվատական ժանրի էության լուսաբանմանը: Մասնավորապես քննվում են պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների

առանձնահատկությունները, դրանց կառուցվածքային հատկությունները, ինչպես նաև ֆունկցիոնալ առավելությունները և թերությունները: Լուսաբանման առարկա են դառնում նաև երկու տեսակի հարցազրույցների հարցերի տեսակները՝ բաց և փակ հարցերը: Նշված դրսևորումները լուսաբանվում են հիմնականում արտասահմանյան լեզվաբանների կարծիքների և մտեցումների շարադրմամբ և սահմանմամբ: Աշխատանքի այս բաժինը վկայում է, որ ատենախոսը քաջ ծանոթ է քննվող հարցերին վերաբերող տեսական գրականությանը և տարբեր լեզվաբանների կարծիքներին, որոնք ատենախոսը քննում է առանձին-առանձին: Ատենախոսը գալիս է այն եզրակացության, որ հարցազրույցը ամենանպատակահարմար մեթոդն է տեղեկատվություն ստանալու համար, քանի որ հարցազրուցավարը կարող է հանդես գալ թե՛ որպես տեղեկատվության հավաքագրող և թե՛ որպես զրույցի մասնակից:

Աշխատանքի երկրորդ գլուխը գալիս է իրականացնելու հետազոտության խնդիրներից մեկը, այն է՝ ուսումնասիրել իմպլիկատորայի՝ որպես գործաբանական կատեգորիայի օրինաչափությունները: Առանձին-առանձին քննվում են իմպլիկատորայի երկու հիմնական տեսակների էությունը: Նշված իմպլիկատորաների ֆունկցիոնալ առանձնահատկությունները ուսումնասիրելու նպատակով ատենախոսը մանրակրկիտ վերլուծում է տարբեր լեզվաբանների մտեցումները, մասնավորապես՝ Փ. Գրայսի, Ս. Լեվինսոնի, Ջ. Լիչի, Ռ. Արունդելի, Փ. Բրաունի, ինչպես նաև ռուս և հայ լեզվաբանների՝ Տ. Օզանեզովայի, Ա. Կոժանովայի, Յու. Ստեպանովի, Վ. Դեմյանկովի, Ե. Երզնկյանի, Շ. Պարոնյանի, Ա. Աբրահամյանի և այլոց մտեցումները՝ դրանով իսկ կազմելով հետազոտության մեթոդական հիմքը և այնուհետև նյութի վերլուծության հենքը: Նշելի, որ երբեմն ատենախոսը արտահայտում է իր սեփական տեսակետները: Այս գլուխը նույնպես փաստում է, որ ատենախոսը քաջ ծանոթ է իր խնդրո առարկայի վերաբերյալ գիտական գրականությանը և ցուցաբերում է վերլուծական հմտություններ:

Աշխատանքի երրորդ, թերևս, առանցքային գլուխը նվիրված է պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների քաղաքավարության իմպլիկատորաների վերլուծությանը: Վերլուծության նյութը քաղված է ամերիկյան առցանց մամուլի հարցազրույցներից, մասնավորապես՝ ԱՄՆ 44-րդ նախագահ Բարաք Օբամայի մասնակցությամբ հարցազրույցներից: Հիմք ընդունելով Բ. Օբամայի և հարցազրուցավարների սոցիալական դիրքը, ինչպես նաև նրանց միջև միջանձնային հարաբերությունները՝ ատենախոսը բաժանում է հարցազրույցները պաշտոնականի և ոչ պաշտոնականի, որոնք էլ աշխատանքում վերլուծվում են առանձին-առանձին: Այս գլխում ատենախոսի ուշադրության

կենտրոնում է քաղաքավարության ամբողջական հարացույցը՝ իր տեսակներով: Վերլուծվում են *խրախուսող, դիմացինի արժանիքները գնահատելու, փոխհատուցող, բացասական, պայմանական քաղաքավարության* դրսևորումները և դրանց հիմքում ընկած իմպլիկատորաները: Քաղաքավարության այս կամ այն տեսակի արտահայտմանը ատենախոսը վերագրում է տարբեր բառային, ձևաբանական և շարահյուսական միջոցներ: Քաղաքավարության ձևավորմանը ատենախոսը վերագրում է նաև արտալեզվական միջոցներ, ինչպիսիք են պաշտոնական և ոչ պաշտոնական համատեքստը և հարցազրույցի մասնակիցների սոցիալական դիրքը:

Աշխատանքի վերջում ատենախոսը ամփոփում է իր հետազոտության արդյունքները հակիրճ եզրակացությամբ:

Գնահատելով այն դրականը, որ պարունակում է իր մեջ սույն ատենախոսությունը, ցանկանում ենք նշել որոշ առանցքային թերություններ և վիճարկելի դրույթներ.

1. Առաջին դիտողությունը վերաբերում է ատենախոսության վերնագրին: Մեր կարծիքով, վերջինիս և բովանդակության միջև կա որոշակի անհամապատասխանություն: Ամբողջ աշխատանքում վերլուծվում է լեզվաբանական գործաբանության միայն մեկ ասպեկտը՝ *քաղաքավարության* դրսևորումները պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներում: Ընդ որում, բոլոր հարցազրույցների կենտրոնում միևնույն անձն է՝ ԱՄՆ նախկին նախագահ Բարաք Օբաման: Ուստի գտնում ենք, որ ատենախոսության վերնագիրը այդքան էլ արդարացված չէ, քանզի չի արտացոլվում աշխատանքի բովանդակության և շարադրանքի մեջ:
2. Աշխատանքում գտնում ենք եզրույթների ոչ ճշգրիտ թարգմանություններ, որոնք չեն արտացոլում դրանց իմաստը: Այսպես, օրինակ՝ “social exchange” բառակապակցությունը թարգմանվել է “սոցիալական փոխազդեցություն” բառակապակցությամբ՝ “երկխոսություն” բառի փոխարեն (էջ 8, 23), “conventional implicature” եզրույթը պետք է թարգմանվի “ավանդական/հիմնական իմպլիկատուրա”, այլ ոչ թե “կոնվենցիոնալ իմպլիկատուրա” (էջ 26, 27, 28), հետևաբար՝ “conventional meanings”՝ “հիմնական իմաստներ” (էջ 26), “conversational implicature” եզրույթը պետք է թարգմանել “խոսակցական իմպլիկատուրա», այլ ոչ թե “խոսքային իմպլիկատուրա”՝ “խոսակցական իմպլիկատուրա” (էջ 26, 27, 29):
3. Աշխատանքում գտնում ենք որոշ լեզվամիջոցների ոչ ճշգրիտ մեկնաբանում: Այսպես, օրինակ՝ “I think we think” խոսքային սեգմենտը, ըստ ատենախոսի, “ակնհայտորեն

անուղղակիություն է փոխանցում իր (Բ. Օբամայի) կարծիքին և անորոշություն ասվածին" (էջ 48): Նշենք, որ անգլախոս երկրներում և հատկապես ԱՄՆ-ում "I think" կամ "I suppose" խոսույթային նշիչները գործածվում են, երբ լեզվակիրը վստահ է իր կարծիքին: Ինչ վերաբերում է "you know" արտահայտությանը, որը ատենախոսը դիտարկում է որպես "անուղղակի բառային միջոց" (էջ 52), ապա այն պարզապես դադար լրացնելու հայտնի միջոց է (pause filler): Միսալ մեկնաբանման մեկ այլ դեպք. "Ակնհայտորեն "quite a bit" բառային միջոցի կիրառությունը չի արտացոլում *սեռելի մեծ ճնշումը դեպի նախագահը*" (էջ 52), այնինչ վերոնշյալ արտահայտությունը ունի "մեծ քանակությամբ" իմաստը:

4. Աշխատանքում հանդիպում ենք քաղաքավարության կամ քաղաքավարության իմպլիկատորայի վերաբերյալ վիճահարույց մեկնաբանություններ: Այսպես, օրինակ՝ վերլուծելով Բ. Օբամայի խոսքաշարից մի հատված՝ ատենախոսը նշում է, որ ԱՄՆ-ի նախագահը արտահայտում է իր մեծ հարգանքը ամերիկացի երիտասարդների նկատմամբ՝ "ցույց տալով, որ *բարձր կարգի չէ իր մասին*" (էջ 45): Անհասկանալի է, թե ինչ հարաբերակցություն կա երիտասարդներին գովելու և անձի՝ իր մասին ցածր կարծիքի լինելու միջև: Մեկ այլ դեպքում ատենախոսը "unfinished" բառաձևին վերագրում է քաղաքավարության իմպլիկատորայի դրսևորում՝ պնդելով, որ "unfinished" բառաձևի փոխարեն ԱՄՆ-ի նախագահը կարող էր կիրառել "undone" բառաձևը (էջ 55): Այստեղ նույնպես չենք տեսնում որևէ առնչություն իմպլիկատորայի հետ: Ավելին՝ "undone business" համակցությունը կասկածելի է թվում: Կամ, 50-րդ էջում մեջբերվում է Օբամայի խոսքում հնչած նախադասությունը "Well, I disagree with him on that, don't I?": Ըստ ատենախոսի՝ don't I բաժանողական հարցը ձևավորում է քաղաքավարություն և արտացոլում է հարցազրույցի պաշտոնական բնույթը: Մեր կարծիքով սույն բաժանողական հարցը ռելևանտ չէ քաղաքավարությանը:
5. Եվ, վերջապես, անհասկանալի է երրորդ գլխի երրորդ ենթագլուխի ("Պաժտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների լեզվագործաբանական առանձնահատկությունների համեմատական վերլուծություն) առկայությունը ատենախոսության շարադրանքում, քանզի այն ոչ այլ ինչ է, եթե ոչ նախարդող գլուխներից որոշ հատվածների կրկնություն

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, աշխատանքն ունի թե՛ արժանիքներ, թե՛ թերություններ: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության մեջ ներկայացրած տեսակետներին և եզրակացություններին, իսկ ատենախոսության հիմնական դրույթները համապատասխանաբար արտացոլված են հրապարակումներում: Այս ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ Վարդիթեր Իվանի Հակոբյանին

վերապահումներով կարելի է շնորհել իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանը, ուստի միջնորդում ենք Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար Լեզուներ» մասնագիտական խորհրդին նրան շնորհելու այդ աստիճանը:

Գրախոս՝ Վ. Բրյուսովի անվան պետական

համալսարանի լեզվաբանության և հաղորդակցման

տեսության ամբիոնի դոցենտ, Բ.Գ.Թ.

Հաստատում եմ դոցենտ Վ. Վեյլանի ստորագրությունը:

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի գիտքարտուղար

 Վ.Ա.Վեյլան



Հ. Փիլավջյան

9.11.2022